

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 299-րդ հոդվածի 4-րդ մասում «բաժանման» բառից հետո լրացնել «կամ ընդհանուր բաժնային սեփականությունում բաժնեմասի օտարման» բառերը, նույն մասում և երկրորդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարի» բառերով:

**ՀՈԴՎԱԾ 2.** Օրենսգրքի 445-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետով.

«4.1 Ապագայում անշարժ գույք հանձնելու պայմանագիր կնքելու մասին նախնական պայմանագիրը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

**ՀՈԴՎԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից: